

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Իգնատի Առաքելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2017 թվականի հոկտեմբերի 5-6-ը
4.	Հրավիրող կողմը	Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարար Ա. Տկաչև
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների գյուղատնտեսության նախարարների հանդիպմանը
6.	Քննարկված թեմաները	<p>1. ԵԱՏՄ-ում համաձայնեցված/համակարգված ագրոարդյունաբերական քաղաքականության մասին,</p> <p>2. Երրորդ երկրների հետ գյուղատնտեսական ապրանքների ազատ առևտրի զոտու ստեղծման նպատակով վարվող բանակցությունների ընթացքում համաձայնեցված որոշումների ընդունման մասին,</p> <p>3. ԵԱՏՄ-ում անասնաբուժասանիտարական հսկողությանը վերաբերող հարցերի, մասնավորապես՝ ԵԱՏՄ-ում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման մասին,</p> <p>4. <<ԵԱՏՄ-ի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի շրջանառության մասին>> համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ընթացքի մասին,</p> <p>5. ԵԱՏՄ ագրոարդյունաբերական քաղաքականության հարցերով խորհրդի ստեղծման մասին:</p>
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	<p>1. Հանդիպման ընթացքում նշվել է, որ ԵՏՀ-ի և ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ձեռնարկվել են պատշաճ միջոցառումներ՝ ինտեգրացման զարգացման և համաձայնեցված ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման համար: Միաժամանակ</p>

		<p>առաջարկվել է ԵՏՀ ներկայացնել առաջարկություններ ագրոարդյունաբերական համալիրում ինտեգրացման և համագործակցության խորացման վերաբերյալ, որոնք կներառվեն 2018-2021թթ. ԵԱՏՄ անդամ պետությունների համաձայնեցված/համակարգված ագրոարդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման համար միջոցառումների ծրագրի նախագծում:</p> <p>2. ԵՏՀ-ի առևտրի հարցերով կոլեգիայի անդամ-նախարար Վ. Նիկիշինան ներկայացրել է երրորդ երկրների հետ գյուղատնտեսական ապրանքների ազատ առևտրի գոտու ստեղծման նպատակով վարվող բանակցությունների մոտեցումները: Կողմերը եկել են համաձայնության, որ ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում սակագներին վերաբերող բանակցություններում ԵԱՏՄ անդամ պետություններին իրենց դիրքորոշումը ձևավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու պայմանավորվող կողմերի շահերը:</p> <p>3. ԵՏՀ-ն ներկայացրել է անասնաբուժական դեղամիջոցների և կերային հավելումների գրանցման կարգը և առաջարկել է սահմանված կարգով ընդունել ԵԱՏՄ-ի տարածքում անասնաբուժական դեղամիջոցների և կերային հավելումների շրջանառությունը կանոնակարգող կանոններ: Բացի այդ, առաջարկվել է շարունակել աշխատանքները կենդանական ծագման սննդամթերքում անասնաբուժական դեղորայքի մնացորդային քանակների վերահսկողության իրավական կանոնակարգման ուղղությամբ: ԵՏՀ-ի կողմից նշվել է անասնաբուժական դեղամիջոցների և կերային հավելումների հարցերով փորձագիտական խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից անասնաբուժական դեղամիջոցների և կերային հավելումների շրջանառությունը կանոնակարգող կանոնների պատշաճ կատարման մոնիթորինգը իրականացնելու, ինչպես նաև նշված հարցերի վերաբերյալ ծագած տարաձայնությունները կարգավորելու նպատակով:</p> <p>4. Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի</p>
--	--	---

		<p>Հանրապետությունը, Ղրղզական Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը տեղեկացրել են «ԵԱՏՄ-ի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի շրջանառության մասին» համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտման մասին: Համաձայնագիրը պատրաստ կլինի ստորագրման՝ Ղազախստանի Հանրապետության կողմից համաձայնագրի ստորագրման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտից հետո:</p> <p>5. Հաշվի առնելով ԵԱՏՄ ագրարային շուկայի պահանջները ներքին արտադրության ապրանքներով բավարարելու կարևորությունը, գյուղատնտեսական ապրանքների արտահանումները խթանելու անհրաժեշտությունը, ագրոարդյունաբերական բնագավառում ինտեգրացման խորացման ուղղությամբ համաձայնեցված որոշումներ ընդունելու կարևորությունը՝ նպատակահարմար է գտնվել ստեղծել ԵԱՏՄ ագրոարդյունաբերական քաղաքականության հարցերով խորհուրդ:</p>
8.	<p>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</p>	<p>Ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների գյուղատնտեսության նախարարների հանդիպման արձանագրություն:</p>
9.	<p>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները</p>	<p>Առաջարկվել է քննարկել ԵԱՏՄ անդամ պետությունների գյուղատնտեսության նախարարությունների միջև համագործակցության խորացման նպատակով աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման մեխանիզմները:</p>
10.	<p>Գործուղվողները</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան</p>
11.	<p>Ստորագրությունը, ամսաթիվը</p>	<p>11.10.2017թ.</p>